

## **ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԳՈՅԱԿԱՆ ՈՐՈՇՉԻ ԱՌԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**Ս. Կ. ԽՎԵԱՆՅԱՆ  
ԳՊՀ դասախոս**

Սեռական հոլովով գոյականական որոշիչները իրենց բովանդակությամբ և ինաստային դրսնորումներով չափազանց շատ են ու բազմազան: Սրանք նման են գոյականի հատկացուցիչ լրացմանը: Այս երկու լրացմաններն իրարից տարբերելու համար պետք է հիշել, որ որոշիչը ոչ թե պատկանելություն է ցույց տալիս, այլ արտահայտում է որակ և հատկություն: Այստեղ կարևոր է բառակապակցության լրացման ճիշտ հարցադրումը. պետք է ասել ոչ թե ու՞ն կամ ինչի՞, ինչերի՞, այլ ո՞ր, ինչպիսի՞ և այլն: Որոշ դեպքերում միևնույն բառակապակցության լրացում անդամը հավասարապես կարելի է ընդունել և իրեւ որոշիչ, և հատկացուցիչ /սարի ծաղիկ, դրսի պատ/:

Ստորև ներկայացնում ենք վերոնշյալ լրացմանների գործածության ոլորտներն ըստ հնարավոր խնդրավորումների:

• Ազգակցական հարաբերություն արտահայտող բառեր. մոր ծեռքեր, մոր բառաջ /կնդ./, հոր սիրտ, քրոջ սեր, քավորի նվեր, խնամու բաժին, ազապի թուր, տոհմի ժառանգ, գերդաստանի վկա:

• Տարբեր զբաղվածության հարաբերություն արտահայտող բառեր. վարպետի ծեռք, խոհարարի գաղտնիք, բանվորի աշխատանք, գուսանի երգ, բանաստեղին երգ, մարգարեի աչք, զինվորի երդում, ռանչպարների կանչ, գործարարի ճարպկություն, ճարտասանի ոճ, մասնագետի աչք:

• Անձնանիշ հասարակ անուններ ցույց տվող բառեր, որոնք արտահայտում են. ա/ տարիքային հարաբերություն. երեխայի խելք, մանկան ճիչ,

թ/ տեղային հարաբերություն. գյուղացու աշխատանանք, արտասահմանցու տեսք, քաղաքացու վարվելածն, օտարերկրացու արտասանություն,

գ/ սեռային հարաբերություն. տղամարդու խոսք, տատու գուրգուրանք, հարսի բաժին, տղայի շոր, աղջկա ձայն:

• Մարդու մարմնի մասեր և օրգաններ ցույց տվող բառեր. գիսի մազ, ատամի մածուկ, բերանի համ, սրտի մորմոր:

• Սննդի ու սննդամթերքի անվանումներ ցույց տվող բառերում. քանի որ սննդամթերքը լինում է կենդանական և բուսական, ուստի այս բառերը կարելի է խմբավորել այսպես.

ա/ կենդանական աշխարհի անուններով արտահայտված սննդի ու սննդամթերքի անվանումներ. կովի մածուն, ոչխարի պանիր, այծի կաթ, գառան դմակ, խոզի միս, ծկան յուղ,

թ/ բուսական աշխարհի անվանումներով արտահայտված սննդի և սննդամթերքի անուններ ցույց տվող բառեր. ծիրանի չիր, դեղձի կոմպոտ, խնձորի քացախ, ընկույզի մուրաբա, թզի ջեմ, ձիթապտղի յուլ:

գ/ ընդհանրապես սննդամթերքի անվանումներ ցույց տվող բառերում. կարի

սեր, թոնրի լավաշ, քարի հաց, տոմատի մածուկ, մեղրի կաթ, հացի խմորիչ, մածունի երես, կաթի շիճուկ:

- Կենդանական աշխարհի անվանումներ արտահայտող բառեր. թռչնի գրիպ, խոզի գրիպ,
- Բուսական աշխարհի անվանումներ արտահայտող բառեր. թեյի բաժակ, ծիրանի փող, սուրճի մրուր, վարդի հոտ,
- Պետությունների, ինքնավար կազմավորումների բաղադրյալ հատուկ անուններ ցույց տվող բառերում. Հայաստանի Հանրապետություն, Ղարաբաղի Հանրապետություն, Բրիտանիայի Թագավորություն, Ռուսաստանի Դաշնություն, Ալիգեյի Հանրապետություն:
- ՀՀ նախարարությունների անվանումներն արտահայտող բառեր. Առողջապահության նախարարություն, Կրթության և գիտության նախարարություն, Մշակույթի նախարարություն, Սփյուռքի նախարարություն, Պաշտպանության նախարարություն:
- Համաշխարհային կազմակերպությունների, հաստատությունների, երկրի հասարակական, քաղաքական մարմինների բաղադրյալ անուններ արտահայտող բառերում. Անվտանգության խորհուրդ, Համամատի ֆեդերացիա, Միավորված ազգերի կազմակերպություն, Ազգերի լիգա, Ազգությունների խորհուրդ, Եկեղեցիների խորհուրդ:
- Բնության երևույթների և առարկաների անվանումներ ցույց տվող բառեր. քանու համբույր, գիշերվա երազ, ցերեկվա տեսիլք, մութի թև, ծիածանի գույն, երկնի ծաղիկ, երկնքի աշխարհ:
- Ուսումնական հաստատությունների և տարբեր կրթօջախների անվանումներ ցույց տվող բառեր. Գավառի պետական համալսարան, Երևանի Յերացու անվան բժշկական համալսարան, Գլածորի համալսարան, շախմատի դպրոց, արվեստի դպրոց, Թումանյանի անվան դպրոց, Շիրակացու վարժարան, սպորտի դպրոց:
- Ժամանակ ցույց տվող բառերի անվանումներ. օրվա վերջը, տարվա եղանակը, օրվա ծախս, ամանորի գիշեր, իրիկնահացի ժամ, ճրագալուցի պահ, իրիկվա տապա, «Մքնշաղի անուրջներ», առավոտվա շաղ:
- Տարվա եղանակների անվանումներ. գարնան զարթոնք, գարնան ծաղիկ, ամռան շոգ, ամռան երեկո, ամռան տապ, աշնան միրգ, աշնան մորմոք, ձմռան գիրկ, ձմռան թագուհի, ձմռան բուք:
- Համաշխարհային տոնների, նշանավոր օրերի, իրադարձությունների անուններ ցույց տվող բառեր. Մարտի 8, Ապրիլի 7, Ապրիլի 24, Հաղթանակի օր, Գիտելիքի, գրի և դպրության օր, Անկախության օր, Շննարարի օր:
- Երկնային նարմինների, մոլորակների անվանումներ արտահայտող բառեր. արևի շող, «Լուսնի սոնատ», աստղի փայլ, լուսնի ամիս:
- Նյութ ցույց տվող բառերի անվանումներ. ոսկու փայլ, բրդի գուլպա, գինու բաժակ, օղու շիշ, քարի հաց, արծաթի գդալ:
- Ազգային հարաբերություններ արտահայտող բառեր. հայի բախտ, գնչուինու սեր, գերմանացու կարգապահություն, ճապոնացու ճկունություն, նեգրի ժպիտ, վրացու քիթ, կովկասցու պար:
- Գիտաբառերի և տերմինների անվանումներ արտահայտող բառեր. Արքիմե-

դի օրենք, Պյութագորասի թեորեմ, Բեռնուլի բանաձև, Նյուտոնի օրենք, թեորեմի ապացույց, փողի զանգված, շուկայի առաջարկ, արյան ճնշում:

• Տեխնիկական սարքավորումների, էլեկտրական ապրանքների և դրանց դետալների անվանումները ցույց տվող բառեր. հեռախոսի լար, էկրանի լուս, համակարգչի մկնիկ, մեքենայի մարտկոց, լիցքավորման քարտ, էներգիայի հոսանք, հեռուստացույցի պալար, ռադիոյի ընկալուչ, ժամացույցի սլաք:

• Գրենական պիտույքների անվանումներ ցույց տվող գոյականներ. տեսրի շապիկ, գրքի կազմ:

• Իրավաբանական տերմիններ և եզրեր արտահայտող բառեր. օրենքի ուժ, իրավաբանի միտք, իրավաբանի գործելակերպ, դատավորի վճիռ, հասարակության կարծիք, մահվան վճիռ, մարդու իրավունք:

• Բժշկության մեջ գործածվող տերմինների և եզրերի անվանումներ. քիթ-կոկորդի բժիշկ, արյան ճնշում, հիվանդի սննդակարգ, հողացավի միջոց, սրտի ինֆարկտ, երկունքի ցավ, թոքի ջերմություն, գլխացավի դեղ, նյարդի լարում:

• Մի շարք տեղանիշ գոյականների անվանում ցույց տվող բառեր. անապատի արև, օվկիանոսի ջուր, ջերմոցի վարունգ, դպրոցի զանգ, դրսի պատ, քարի հաց, թոնրի լավաշ, ներսի դրու, դաշտի բույս:

• Առօրյայում և կենցաղում գործածվող առարկաների անուններ ցույց տվող բառեր. կոճի թել, ասեղի ծակ, մատանու քար, վառարանի ծուխ, օջախի ծուխ, պատի ժամացույց, պատի գորգ, հատակի գորգ, սեղանի ժամացույց:

• Որոշ վերացական գոյականներ. Սիրո կամուրջ, հոգու հատոր, աստծու կրակ, երջանկության մեխանիկա, կյանքի ընկեր, խղճի ծարավ, ցավի մորմոք, մենության խավար, վեհության խիճղ, անկման սարսափ, սգի լաց, ծարավի չորություն, արհավիրքի ուժ, հավատի մեղք, սգո արարողություն, հրեշտակի թև, խոհերի շշուկ, ցավի արցունք, ուրվականի շունչ, խնդության ճիչ:

• Մի շարք թանձրացական գոյականներ. հարսանիքի գիշեր, օջախի սալ, դեղի սուվեր, տղմածառի լույս, դրան զանգ:

• Մի շարք գրաբարի սեռական- տրականի քարացած ձևեր ունեցող բառեր. Մշո դաշտ, Գեղարքունյաց լեռներ, Սյունյաց աշխարհ, Սևանա լիճ, Վրկանա ծով, Գեղանա ծովակ, հայոց աշխարհ, կայսեր գահ, դստեր սեր, Առաքելոց վանք, պարսից շահ, Արշակունյաց դինաստիա, Պարսից ծով, Կասպից ծով, օրինաց երկիր, Արծրունյաց տիկին:

• Որպես վերնագրեր հանդես եկող բաղադրյալ հատուկ անումներում. «Լուսնի սոնատ», «Սասնա ծռեր», «Մատոյան ողբերգության», «Մերժաղի անուրջներ», «Ծիրանի փող», «Մահվան տեսիլ», «Կատվի դրախտ», «Ռանչպարների կանչ», «Մանկության օրեր», «Հարդագողի ճամփորդները», Ֆլորայի այգի, Կարապի լիճ, Շամիրամի այգիներ:

## ОСОБЕННОСТИ СУБСТАНТИВНЫХ ОПРЕДЕЛЕНИЙ В ФОРМЕ РОДИТЕЛЬНОГО ПАДЕЖА В ИМЕННЫХ СЛОВОСОЧЕТАНИЯХ

C. K. ԽԱՆՃԱՆՅԱ

В статье рассмотрены именные словосочетания, имеющие субстантивные определения в родительном падеже. Последние представлены определенными смысловыми

группами, касающимися разных сфер жизни.

## FEATURES OF ATTRIBUTES EXPRESSED BY A NOUN IN THE GENITIVE CASE USED IN NOUN PHRASES

*S. K. KHANDANYAN*

In this article we mainly consider the noun phrases, with substantivized attributes in genitive case. The latter are represented by certain semantic groups that relate to different sectors and spheres of life.

# ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄՎԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՅԱՆԳԻՆ ՍԻՍԱԿԱՆ» ԵՐԿՈՒՄ

**Հ. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
*ԳՊՀ դասախոս*

Ստեփանոս Օրբելյանի գործածած նոր բառերի մեջ մասը կազմված են հայենի բառակազմական օրինաչափություններին համապատասխան: Ինչպես նշում է Լ. Չովսեփյանը. «գրաբարի բառակազմական կաղապարների բազմազանությունը, ինչպես նաև հիմքային զուգաձևությունների առատությունը նպաստում են անհատական բառակերտմանը և հնարավորություն տալիս ստեղծելու ոճական բազմազանության աղբյուր հանդիսացող հարանվանական և հոմանշային շարքեր»:

Նոր բառեր ստեղծելու և ընդհանրապես բառապաշարի հարստացման հիմնական միջոցներից են բառաբարդումը և ածանցումը:

### **Բառաբարդում: Յամադրական բարդություններ:**

Օրբելյանը նոր բառերի մեջ մասը ստեղծել է բառաբարդման սկզբունքով, հայերենին հատուկ բառակազմական կաղապարներով: Դրանք հիմնականում իսկական բարդություններ են, որոնց բաղադրիչները միացել են ա հոդակապով և ունեն մեկ ընդհանուր շեշտ: Բացի ա հոդակապից, զգալի թվով բարդություններում հոդակապի դերով հանդիսանում է ե ձայնավորը, որը հիմնականում գործում է ի-ով վերջացող բառ-բաղադրիչների դեպքում (ի+ա>ե), ինչպես՝ գերեթափ, բարերոյ, բարեպատճառ, ուկետուտ և այլն: Իսկական բարդությունների ամենատարածված կաղապարներն են՝

1. Գոյական + հոդակապ + բայարնատ՝ աղօթահաւրդոր, աստուածաբնակ, աստուածաբնկալ, աստուածակոխ, աստուածաթող, աստուածագումար գետաւարար, գերեթափ, դժոխահրաւեր, խաւարահրաւեր, ծովամատոյց, ծնրահանգոյց, կամարակապ, կարակնակերտ, ջրագնաց, սագաշեն, սովամածոյց, քարգնաց, քարաշեն, քարատաշ, քրթարաղ:

Բաղադրյալ բառերի մեծագույն մասում անվանական հիմքը համընկել է ուղ-